Տնկանյութի գնման
մրցույթ-հայտարարություն

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը (ATP Charitable Foundation), համագործակցելով «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի և «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի հետ, Եվրամիությանֆինանսավորմամբ 2021թ մարտի 1-ից մեկնարկել է EU4ENVIRONMENT. «ԿԱՆԱՉ ՀԱՄԱՅՆՔ՝ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱ» եռամյա ծրագիրը (NEAR-TS/2020/168333-3/2):

Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել տնկանյութի գնում, որի համար կազմակերպվող մրցույթ-հայտարարության մանրամասները կարող եք տեսնել ստորև:

Հայտերի ընդունման ժամկետը՝ 2021թ. հունիսի 11-ից մինչև 2021թ. հուլիսի 11-ը: Կդիտարկվեն միայն լիարժեք դիմումները, որոնք հայտատուին ներկայացվող պարտադիր պայմաններին (տե՛ս ստորև) առնչվող փաստաթղթերի հետ միասին պետք է ներառեն նաեւ գնառաջարկն՝ ըստ հաջորդիվ ներկայացված տեխնիկական բնութագրի և գնման ժամանակացույցի:

Տեխնիկական բնութագիր և գնման ժամանակացույց

Չափաբաժինը	**Տնկանյութը ըստ ծառատեսակների**	**Տարիքը/ տարեկան**	Արմատավզիկի տրամագիծը/ մմ	Ցողունի բարձրությունը/ սմ	**Ըստ արմատային համակարգի տնկանյութի քանակությունը/հատ**			Տնկանյութի չափաքանակների մատակարարումը ըստ համայնքների և տնկման ժամանակահատվածի		
					Փակ արմատային համակարգով	**Բաց արմատային համակարգով**	**Ընդամենը**	Լեռնակերտ	Մեծ Սարիար	
								2021թ. հոկտեմբերի 20 - նոյեմբերի 20	2021թ. հոկտեմբերի 20 - նոյեմբերի 20	2022թ. մարտի 15- ապրիլի 15
1	Սոճի՝ սովորական և ղրիմյան	2	4-6 մմ	25-30սմ	25000	78000	103000	25000	32000	46000
2	Կաղնի արևելյան	2	3-6 մմ	10-20սմ	12000	63000	75000	47000	28000	
3	Թխկի բարձրլեռնային	2-3	5-10 մմ	15-35 սմ	2000	10000	12000	5000	5000	2000
4	Կեչի՝ ելունդավոր, Լիտվինովի	2-3	4-10 մմ	30-60 սմ	2000	10000	12000	5000	5000	2000
5	Հացենի սովորական	2-3	6-10 մմ	40-60 սմ		20000	20000	11000	3000	6000
6	Արևելյան խնձորենի	2-3	3-6մմ	25-50սմ	5000	34000	39000	13200	13500	12300
7	Տանձենի կովկասյան	2	2-4մմ	10-20սմ	5000	34000	39000	13200	13500	12300
Ընդամենը					51000	249000	300000	119400	100000	80600

*** Հայտատուին ներկայացվող պարտադիր պայմանները՝**

. Տնկանյութը պետք է աճեցված լինի ՀՀ անտառներից հավաքած տեղական տեսակների սերմերից:
. Նշված տնկանյութից 119,400 հատը պետք է առաքել Շիրակի մարզի Լեռնակերտ համայնք աշուն 2021- ին, 100,000 հատը Մեծ Սարիար համայնք աշուն 2021-ին, իսկ 80,600 հատ գարուն 2022թ:
. Տնկանյութի (բաց արմատային համակարգով աճեցված) տեղափոխումը տնկարանից մինչև տնկատեղ պետք է կատարվի հողատորֆային ջրային լուծույթով պատրաստված դույլերի մեջ:
. Տնկանյութի (փակ արմատային համակարգով աճեցված) տեղափոխումը տնկարանից մինչև տնկատեղ պետք է կատարվի արկղերի մեջ ուղղահայաց, մեկ շարքով դասավորված վիճակում:

Մրցույթի կազմակերպման կանոնները և հաղթողին որոշելու կարգը՝

- Հայտ ներկայացնողն իրավունք ունի մասնակցել մրցույթի տեխնիկական բնութագրում նշված ինչպես մեկ, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժիններին միասին:
- Հայտերի գնահատումը կատարվելու է յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, և ըստ այդմ հաղթողները որոշվելու են յուրաքանչյուր առանձին չափաբաժնի համար: Յուրաքանչյուր չափաբաժնի համար գնահատումը կատարվելու է մրցութային հանձնաժողովի կողմից՝ հայտ ներկայացնողներից ստացված գնային առաջարկների, տեխնիկական բնութագրի պահանջների համեմատման միջոցով: Հաղթողը որոշվելու է ներկայացված գնային առաջարկի և տեխնիկական պահանջներին առավելագույն համապատասխանության ընդհանուր համադրման արդյունքում:
- Որևէ չափաբաժնի մասով հայտ չներկայացվելու կամ ներկայացված հայտերով նախատեսված չափաբաժիններից որևէ մեկի գծով հայտն անբավարար ճանաչելու կամ ներկայացված հայտերից որևէ մեկը մրցույթի պահանջներին բավարար չճանաչվելու դեպքում, մրցույթն ամբողջությամբ համարվում է չկայացած՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ անտառտնկման նպատակով գնվելիք տնկանյութի ամբողջական ծավալի ապահովումը պետք է լինի միաժամանակ և համատեղ՝ նախանշված նպատակին հասնելու տեսանկյունից: Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո ոչ շուտ, քան 5 աշխատանքային օր հետո, կարող է հայտարարվել նոր մրցույթ:
- Մրցույթի փաթեթները պետք է պատրաստվեն և ստորագրվեն և կնքվեն (կնիքի առկայության պարագայում) հայտը ներկայացնողների համապատասխան լիազորություն ունեցող անձանց կողմից, դրվեն փակ ծրարների մեջ, դրանք ևս ստորագրել ու կնքել (կնիքի առկայության պարագայում): Անհրաժեշտ է ներկայացնել 3 տարբեր ծրարներ, որոնցից մեկում կլինեն բնօրինակ փաստաթղթերը, իսկ մյուս երկուսում՝ պատճենները: Բոլոր ծրարների վրա պետք է պարտադիր կարգով նշված լինեն «բնօրինակ» կամ «պատճեն» բառերը, հայտ ներկայացնողների տվյալների (իրավաբանական անձանց դեպքում՝ անվանում, իրավաբանական և գործունեության հասցեներ, ՀՎՀՀ, կոնտակտային տվյալներ, այդ թվում՝ էլ. փոստի հասցե, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրի սերիա ու համար, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված, հաշվառման հասցե, կոնտակտային տվյալներ, այդ թվում՝ էլ. փոստի հասցե (Փաթեթները պետք է ներկայացվեն Արշակունյաց 57/5 հասցեով, երկ.-ուրբ. ժամը 9:00-17:00, հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ Արթուր Հարությունյան +374-94-47-34-46 և Վահե Մացակյան +374-55-60-06-94)): Սույն կետի պահանջներին չբավարարող ծրարները մրցութային հանձնաժողովը կարող է չդիտարկել և մերժել:
- Հայտերի բացումն ու գնահատումը տեղի կունենա մինչև 2021 թվականի հուլիսի 7-ը, իսկ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների մասին կտեղեկացվի վերջիններիս կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեներով մինչև 2021 թվականի հուլիսի 12-ը:
- Վճարումը կատարվում է համապատասխան մատակարարումն ամբողջությամբ, իսկ մաս-մաս կատարելու դեպքում՝ տվյալ մասը հանձել-ընդունելու և դրա համար դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, եթե առկա չեն մրցույթի պայմաններին անհամապատասխանության դեպքեր:

* կախված եղանակային պայմաններից նշված ամսվա (երի) օրերը կարող են ենթարկվել փոփոխությունների + - 10 օր: